# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Ընդունվել է 22.02.2007*

***Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան***

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ հարաբերությունները:

***Հոդված 2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին***

1. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես ազգային եկեղեցի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կենտրոնով, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների նվիրապետական աթոռներով, եւ նրա բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում:

2. Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնակառավարումն իր նվիրապետության սահմաններում:

***Հոդված 3. Ամենայն Հայոց Կաթողիկոսը***

Հայաստանի Հանրապետության Նախագահը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գլուխ ընտրված Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե նա Հայաստանի Հանրապետության քաղաքացի չէ:

***Հոդված 4. Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը***

Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների կարգավորման սկզբունքները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ընդհանուր հարաբերությունները՝ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով եւ միջազգային պայմանագրերով, իսկ առանձնահատուկ հարաբերությունները՝ որպես պետության եւ նրա կողմից ազգային ճանաչված Եկեղեցու հարաբերություններ, սույն օրենքով:

***Հոդված 5. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ժառանգությունը***

1. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգեւոր, մշակութային եւ վավերագրական ժառանգությունը ազգային ինքնության հենքի կարեւոր եւ անբաժանելի մասն է:

2. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմական, հոգեւոր, մշակութային եւ վավերագրական արժեքների՝ պետական սեփականություն հանդիսացող հատվածը կարող է օտարվել կամ պահպանման վայրից փոխադրվել՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Այդ արժեքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ խորհրդակցելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:

***Հոդված 6. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պաշտամունքային կառույցները***

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի կառուցելու վանքեր, եկեղեցիներ եւ պաշտամունքային այլ շինություններ, գործող դարձնելու պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող վանքերն ու եկեղեցիները: Պատմական հուշարձանի կարգավիճակ ունեցող եկեղեցիների եւ պաշտամունքային այլ